ԵՐԵՐՈՒՅՔԻ ՏԱՃԱՐԻ ԹՎԱԳՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ
ԿԱՄ ՈՐՏԵՂ ԵՆ ԳՏՆՎԵԼ ԲԱԳԱՐԱՆ ՈՒ ԵՐՎԱՆԴԱՎԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1842 թ. Հովհաննես Շահխաթունյանցը հայտնաբերեց հայ և օտար պատմիչների կողմից երբևէ չհիշատակված Երերույքի տաճարը: Նա առաջինն էր, ով նորահայտ հուշարձանն արժեվորեց որպես "ամենապայծառ հոյակապ եկեղեցի" և տաճարում առկա 1038 թ. արձանագրության հիման վրա արեց չափազանց կարևոր եզրահանգում. "... և որպէս երևի յարձանագրութենէ անտի՝ կոչէր յառաջագույն անուն տեղւոյս Երերվաց դաստակ"[1]:

1907 թ. Նիկողայոս Մառը՝ առաջինն անդրադառնալով Երերույքի տաճարին, գրում է. "Եզրահանգում եմ. Երերույքի բազիլիկան, որ գտնվում է նույն իշխանական տոհմի տիրույթներում, կառուցվել է Կամսարականներից մեկի կողմից և այն ժամանակաշրջանում, երբ առաջ էր եկել Տեկորի տաճարի սկզբնական հենքը՝ Երերույքի տաճարի կրկնակը, ասել է թե՝ V դարի վերջին կամ VI դարի սկզբին"[2]:

1911 թ. Թորոս Թորամանյանը գրում է. "Ըստ իս՝ Տեկորի, Քասախի տաճարները պարզապէս հեթանոսական մեհեաններ են, իսկ մնացածները (նկատի ունի Երերույքի, Աշտարակի, Մրենի տաճարները – Վ. Գ.), եթե ոչ մեհեաններ, գոնէ մեհենական ձևերու ազդեցութեան տակ կանգնուած հայոց քրիստոնէութեան նախնական տաճարներ. թէև աւելի հաւանականը ըստ իս այն է՝ որ միւս նմաններն ալ հեթանոսական շէնքեր էին միայն մի քիչ աւելի ուշ փոխարկուած քան Տեկորի ու Քասախի տաճարները"[3]: 1930–1932-ին կրկին անդրադառնալով Երերույքի տաճարին՝ Թ. Թորամանյանը գրում է. "Շինության կամ հիմնարկության ժամանակը շատ պարզ որոշվում է ճարտարապետական տվյալների համեմատությամբ: Նախ, շենքի ներքին ձևը հունական սելլայի կամ բազիլիկի տիպն ու-

---

[1] *Հ. Շահխաթունյանց. Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Ս. Էջմիածին, 1842, էջ 43–44:*

[2] H. Marr. Ереруйкская базилика. Ереван, 1968, с. 28.

[3] *Թ. Թորամանյան. Տեկորի տաճարը, Թիֆլիս, 1911, էջ 77:*

նի, որ եթե ոչ նախաքրիստոնեական, գեթ Հայաստանի քրիստոնեության սկզբին հիմնված է, այսինքն մի պարզ սրահ՝ կրոնական արարողությանց հատուկ"[4]:

Ուսումնասիրողները միաձայն ընդունեցին Ն. Մառի տեսակետը, ընդ որում՝ երբևէ չհիշատակելով Թ. Թորամանյանի տեսակետը: 1986 թ. Երևան եկավ անսպասելի ու արտառոց մի կարծիք, ըստ որի հայ հանճարի փայլատակումներից մեկը՝ Երերույքի տաճարը, կառուցել են ոչ թե հայ, այլ սիրիացի վարպետները. "... չնայած խոր ինքնատիպությանը՝ հայկական վաղ քրիստոնեական ճարտարապետությունն իր վրա կրեց սիրիական համաժամանակյա պաշտամունքային ճարտարապետության ազդեցությունը: Սիրիացի վարպետներն առանձին դեպքերում կարող էին մասնակցել հայկական վաղ բազիլիկաների շինարարությանը: Մասնավորապես այդպիսի մի արտել պետք է որ աշխատեր Երերույքում"[5]:

Հայ գիտնականները փորձ անգամ չարեցին մոսկվացի գիտնականին պատասխանելու և պարզապես լռեցին: Ավելի արտառոցն այն էր, որ շարունակեցին և այսօր էլ Երերույքի տաճարը համարում են V–VI դարերի կառույց: Եվ սա այն դեպքում, երբ այդ կարծիքն իսպառ հերքելու համար բավարար էր վկայակոչել միայն մեկ տեսակետ, որը, կարծես, հենց այդ առիթով էր գրվել. "Անշուշտ պիտի կարծուի որ նախ քան Ս. Գրիգորի միջոցաւ ընդհանուր դարձը, երբ հայոց քրիստոնէութեան վառարանը Ատրիքն ու Միջագետքն էր, հետևաբար պէտք է որ հայոց եկեղեցիները այդ երկիրներու եկեղեցիներուն նմանէին. բայց մենք մինչև այսօր ոչ մի օրինակ չունինք նախ քան 4-րդ դար Ատրիքի և Միջագետքի եկեղեցիներու, որոնք կարելի լինէին համեմատել մեր հնագոյն եկեղեցիներու հետ: Բացի այդ, ինչպէս վերև տեսանք, Ատրիքի և Միջագետքի մէջ ալ չէր կարող լինել, քանի որ դեռ կը շարունակուէր հռոմէական կայսրութեան հալածանքը և թոյլատրուած չէր մեծամեծ եկեղեցիներ կանգնել նոյն նահանգներուն մէջ: Ուստի հայոց եկեղեցիներու սկզբնական ձևի ծրագրումը դարձեալ պիտի փնտռենք Հայաստանի մէջ գտնուած կանգուն ու կիսականգուն յիշատակարաններուն մէջ, որոնք փոքր ի շատէ համեմատուելով պատմութեան հետ, ըստ բաւականի հաւանական եզրակացութեան կառաջնորդեն մեզ"[6]:

Մեր գիտնականներն անկասկած գիտեին այդ տեսակետի գոյության մասին, սակայն վկայակոչել Թ. Թորամանյանին նշանակում էր, կամա թե ակամա,

---

[4] *Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության, Երևան, 1942, էջ 286:*

[5] Ф. В. Шелов№Коведяев. Заметки по греческой эпиграфике Армении.– ИФЖ, 1986, № 1, с. 63.

[6] *Թ. Թորամանյան. Տեկորի տաճարը, էջ 73–74:*

խոստովանել, որ վաղ շրջանի հայ ճարտարապետության ուսումնասիրությունը ընթացել ու այսօր էլ ընթանում է ոչ թե հայ ճարտարապետության ուսումնասիրության հիմնադիր Թ. Թորամանյանի նախանշած ավելի քան հստակ ճանապարհով, այլ՝ միանգամայն խոտոր արահետներով:

ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Պատմության և Կուլտուրայի հուշարձանների պահպանման ու օգտագործման գլխավոր վարչության պետ Ա. Մ. Կիրակոսյանի պահանջով 1986-ին ներկայացրել եմ IV դարի սկզբին կառուցված Երերույքի տաճարի վերակազմության նախագիծ և համալիրի հետազոտական-հետախուզական, վերանորոգման-վերականգնման, շրջակայքի պեղման-բարեկարգման աշխատանքների առաջադրանք-նախահաշիվ[7]: Նույն թվականին էլ հրատարակել եմ տաճարի վերակազմության նախագիծը[8]:

Ա. Մ. Կիրակոսյանն առաջինն էր, ով նախաձեռնեց նախադեպը չունեցող նման ծավալի աշխատանք և իրականացրեց այդ ժամանակների համար աներևակայելի գործ՝ վերացրեց ռուս-թուրքական սահմանային անցակետը և Անիպեմզա քաղաքատիպ ավան ու Երերույքի տաճար այցելությունը դարձավ մատչելի: Նրանից հետո տարածքի պեղման աշխատանքներն այլևս չշարունակվեցին: Եվ Երերույքի տաճարը՝ թանգարան, իսկ տարածքում ճարտարապետության ուսումնասիրության գիտական կենտրոն հիմնադրելու՝ պետական մեծ գործիչ Ա. Մ. Կիրակոսյանի ծրագիրը մնաց անկատար:

1988 թ. անվերապահ ընդունելով Թ. Թորամանյանի՝ Տեկորի ու Երերույքի տաճարները հեթանոսական շրջանում կառուցված լինելու տեսակետը, անդրադարձել եմ Երերույքի տաճարի վերակազմությանը և նշել, որ "Հայկական վաղ միջնադարի եռանավ բազիլիկաների ծագման, թվագրման, վերակազմության, ընդհանուր քրիստոնեական ճարտարապետության մեջ նրանց տեղի ու դերի, ազդեցության ու փոխազդեցության հետ կապված հարցերը արմատական վերանայման կարիք ունեն"[9]: Հարցեր, որոնց կարևորության նկատառումով անդ-

---

[7] *Վ. Գրիգորյան. Երերույքի ճարտարապետական համալիրի առաջադրանք և նախահաշիվ, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Պատմության և Կուլտուրայի հուշարձանների պահպանման ու օգտագործման գլխավոր վարչության նախագծային գրասենյակ, Վ. 23/86, 1986, էջ 1–30:*

[8] *Վ. Գրիգորյան. Երերույք. վերակազմության նախագիծ.– "Սովետական արվեստ", 1986, № 6, էջ 43:*

[9] V. Grigorian. Reconstruction of the Ereruyk Basilica, Estratto dagli Atti del Quinto Simposio Internazionale di Arte Armena № 1988, Venezia № S. Lazaro, 1992, p. 179–184; V. Grigorian. Reconstruction of Ereruyk Basilica, The Armenian Weekly, Watertown, Massachusetts, 1988, pp. 12–14.

բաղարձել եմ նաև հետագայում[10]: 1989-ին քննության եմ առել և ներկայացրել Երերույքի տաճարի վերակառուցման սկզբունքները[11]: 2003-ին Երերույքի տաճարի թվագրման խնդրի հետ կապված՝ հայտնել եմ այն տեսակետը, որ "Պատմական Շիրակ գավառի կենտրոնական մասում՝ Ախուրյան գետի աջ ու ձախ ափերին տեղադրված Երերույքի և Տեկորի տաճարները հեթանոսական մեհյաններ են եղել և, ամենայն հավանականությամբ, կառուցվել են Երվանդ Վերջինի և Խսրով Մեծի թագավորության միջև ընկած ժամանակահատվածում: Մինչ օրս Երերույքի տաճարը դիտարկվել է իբրև մեկուսի կանգնած շինություն: Պեղումները պարզ դարձրին, որ այն կառուցվել է Անիպեմզա ավանի արևմտյան մասում ընկած բարձրադիր ժայռաբլրի վրա, մոտ 2,5 հա տարածք զբաղեցնող պարսպապատ քաղաքում, թերևս քաղաք-սրբատեղիում: Բավարար հիմքեր կան ենթադրելու, որ այն Խորենացու մոտ հիշատակված Երվանդավանն է"[12]: Փաստորեն, դեռևս 2003-ին մատնացույց եմ արել բացառիկ մի փաստ, որը, ինչպես կտեսնենք ստորև, առաջադիր խնդիրը լուծելու միակ բանալին է: Գիտնականները վերը բերված այս կարծիքները ոչ մերժեցին, ոչ էլ ընդունեցին՝ հավատարիմ իրենց սովորության, պարզապես լռեցին:

Քանի որ այսօր հայ ճարտարապետության կարևորագույն խնդիրներից մեկը, դիցուք, բացառիկ արժեքավոր հուշարձանի՝ Երերույքի հեթանոսական տաճարի թվագրման հարցը բացարձակապես չի հետաքրքրում հայ ճարտարապետության լուսաբանությամբ զբաղված գիտնականներին, ուստի այն ներկայացնում եմ ավելի քան ըմբռնելի հարցադրումով. որտե՞ղ են գտնվում Բագարանն ու Երվանդավանը:

Մովսես Խորենացին "Պատմություն հայոց" աշխատությունը, որտեղ ներկայացնում է Երվանդ Դ և Արտաշես Ա թագավորներին, գրել է V դարում[13]: Ստ. Մալխասյանցը, անդրադառնալով Խորենացու օգտագործած աղբյուրներին, գրում է. "Ստույգ աղբյուրների բացակայության պատճառով Խորենացին ակա-

---

[10] Վ. Գրիգորյան. Հայաստանի ճարտարապետության պատ-մության հիմնովին վերանայման խնդիրը.– ՊԲՀ, 2014, № 1, էջ 16–21:

[11] Վ. Գրիգորյան. Երերույքը հայ հանճարի փայլատակումներից է.– "Սովետական արվեստ", 1989, № 8, էջ 32–38:

[12] Վ. Գրիգորյան. Հայաստանի վաղ քրիստոնեական պաշտամունքային կառույցների թվագրման խնդրի շուրջ (Երերույքի և Տեկորի բազիլիկաների հիմնադրվելը հեթանոսական շրջանում որպես մեհյաններ).– "Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները", Միջազգային համաժողով, Երևան, 2003, էջ 172–173:

[13] Մովսես Խորենացի. Պատմություն հայոց, թարգմ., ներած. և ծանոթ. ակադ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 172–194:

մայից ընկնում է խոշոր սխալների մեջ”[14]: Գիտնականի այս հստակ տեսակետն առիթ հանդիսացավ Երվանդ Դ և Արտաշես Ա թագավորներին վերաբերող իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Խորենացուց շուրջ ութ դար առաջ, քննության առնել այս նկատառումով: Խորենացին տվյալ շրջանը ներկայացնելու համար, բնականաբար, օգտվել է իր ձեռքի տակ եղած բազմաթիվ աղբյուրներից, ինչպես ինքն է նշում. “Այս բանը մեզ հաստատապես պատմում է Հանիի Ողյումպ քուրմը, որ գրել է մեհենական պատմություններ և ուրիշ շատ գործեր, որ մենք պատմելու ենք, որին վկայում են նաև պարսից մատյանները և հայոց վիպասանների երգերը”[15]: Խորենացին բազմիցս օգտվել է նաև Ագաթանգեղոսից, ում անվանում է “Տրդատ Մեծի ճարտար քարտուղար”[16]:

Աղբյուրների բացակայության, անորոշության կամ թերության պատճառով Խորենացին ակամա թույլ է տալիս մեկ անճշտություն. դա Բագարանը Երվանդի երեք քաղաքներից մեկը համարելն է[17]: Հայ և օտար պատմիչների, այդ թվում Ագաթանգեղոսի պատմության մեջ Երվանդի կառուցած Բագարան անունով քաղաքի, ավանի կամ տեղավայրի մասին որևէ հիշատակություն գոյություն չունի: Ավելին, որևէ տեղեկություն չկա նաև բոլոր կուռքերն Արմավիրում գտնվելու և այնտեղից Բագարան տեղափոխելու մասին:

Ուսումնասիրողները պարզապես չնկատեցին Խորենացու թույլ տված անճշտությունը և գոյություն չունեցող քաղաքը փորձեցին “տեղադրել” մի դեպքում՝ նախկին Հաջիբայրամ, ապա Բախչալար և միայն 1968-ից Բագավան վերանվանված գյուղում[18], մյուս դեպքում՝ քրիստոնեության շրջանում հիմնադրված Բագարան քաղաքում: Բ. Առաքելյանը մեջբերում է. “Երվանդաշատի տեղադրության համար լրացուցիչ փաստարկ է և այն, որ Խորենացու վկայությամբ քաղաքի շինությունը ավարտելով, Երվանդը հիմնադրեց Բագարանը, որտեղ կառուցեց մեհյաններ և այնտեղ փոխադրեց աստվածների բագինները: Խորենացին ասում է, թե Բագարանը հիմնադրվեց “իբրև քառասուն ասպարեզով” Երվանդաշատից հյուսիս, որը կազմում է 9,2 կմ և միանգամայն համապատասխանում է մեր նշած վայրից մինչև Բագարան եղած հեռավորությանը”[19]: Ս. Մանու-

---

[14] *Նույն տեղում, էջ 24–25:*

[15] *Նույն տեղում, էջ 182:*

[16] *Նույն տեղում, էջ 202:*

[17] *Նույն տեղում, էջ 175:*

[18] *Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 532:*

[19] *Բ. Ն. Առաքելյան. Որտե՞ղ են գտնվել Երվանդաշատ և Երվանդակերտ քաղաքները.– ՊԲՀ, 1965, № 3, էջ 92:*

չարյանը և Հ. Խալփախչյանը գրում են. “Բագարան. բերդաքաղաք, պաշտամունքային կենտրոն, Մեծ Հայքի Այրարատ նահանգի Արշարունիք գավառի հյուսիսարևելյան ծայրում, Ախուրյան գետի աջ ափին: Ըստ Մովսես Խորենացու՝ Բագարանը կառուցել է Երվանդ Դ թագավորը մ. թ. ա. II դարի սկզբին, Արմավիրից այնտեղ են տեղափոխել հեթանոսական կուռքերը …”[20]:

Այս և շատ ավելի կարևոր մյուս հարցի պատասխանը կարող ենք գտնել, եթե ուշադիր կարդանք, Խորենացու՝ Երվանդի և Սմբատի պատերազմին վերաբերող մանրամասն տեղեկությունը: “… Երվանդին Ուտիք գավառում լուր է հասնում, թե պարսից թագավորը մեծ զորք գումարեց Սմբատի ձեռքի տակ, որպեսզի քեզ վրա գա և մանուկ Արտաշեսին իր թագավորությունը բերի: Երվանդն այս լսելով՝ այդ տեղում կողմնապահներ է թողնում նախարարներից շատերին և ինքն շտապով գալիս է իր քաղաքը, որպեսզի իր մոտ հավաքի հայոց, վրաց և Կեսարիայի կողմերի զորքերը, նաև Միջագետքինը, խնդրելով և վարձ վճարելով: Գարնանային օրեր էին, ուստի բոլոր զորքերը շուտով գումարվեցին նրա մոտ. բազմաթիվ հետևակ զորքերով եկավ նաև Արգամը՝ Մուրացյան ցեղի տանուտերը, որ Աժդահակի սերնդից էր: … Իսկ Սմբատը մանուկ Արտաշեսի հետ շտապում էր հասնել Ուտիքի սահմանները: Այնտեղ նրան ընդառաջ եկան այն կողմի զորքերը, նաև այն նախարարները, որոնց Երվանդը թողել էր այնտեղ: … Բայց Սմբատը մանուկ Արտաշեսի հետ բարձրանում է Գեղամա ծովի ափը՝ Արագած կոչված լեռան թիկունքով. նրանք շտապում էին հասնել Երվանդի բանակին: … Եվ Երվանդի բանակն ավելի քան երեք հարյուր ասպարեզ դեպի հյուսիս հեռու էր իր քաղաքից և գտնվում էր Ախուրյան գետի վրա: Երվանդը երբ լսեց (Սմբատի մոտենալը), նրա դեմ հանեց իր զորքերի բազմությունը և ճակատ կազմեց իր բանակից ոչ հեռու: … Երբ Արտաշեսի դրոշակները Երվանդի զորքի ճակատի առաջ երևացին, Արգամը հետևակների բազմությունն առավ ու մի կողմ քաշվեց: Իսկ Սմբատը հրամայեց պղնձե փողեր հնչեցնել և իր զորքի ճակատն առաջ շարժելով սլացավ, ինչպես արծիվը կաքավների երամի վրա: … Այստեղ պետք էր տեսնել Երվանդի գնդի և Միջագետքի զորքերի սարսափելի կոտորածը: … Մնացած զորքերը փախուստի են դիմում”[21]:

Այժմ անդրադառնանք մեր կարևոր խնդրին.

ա. Քանի՞ քաղաք է հիմնադրել Երվանդը, և ո՞րն է նրա հիմնադրած երրորդ քաղաքը.

Ըստ Խորենացու՝ Երվանդը հիմնադրել է երեք քաղաք: Այս տեղեկության հավաստիությունը, ինչպես կպարզվի քննությունից, կասկածից վեր է: Ուրեմն,

---

[20] *Ս. Մանուչարյան, Հ. Խալփախչյան. Բագարան.– “Հայկական սովետական հանրագիտարան”, հ. 2, Երևան, 1976, էջ 197:*

[21] *Մովսես Խորենացի. նշվ. աշխ., էջ 177–179:*

պատերազմը պետք է տեղի ունենար կա՛մ Երվանդաշատում, կա՛մ Երվանդակերտում, կա՛մ էլ Բագարանում: Սակայն Խորենացու վկայությամբ՝ պատերազմը է տեղի ունենում և շատ արագ ավարտվում է Երվանդավանում: Վերը մեջբերված հատվածում պատերազմի նախապատրաստության համար Երվանդը շտապով գալիս է “իր քաղաքը”, *որպեսզի* “իր մոտ” *հավաքի բոլոր կողմերի զորքերը, և բոլորը շուտով գումարվում են* “նրա մոտ”, *այսինքն՝ Երվանդի քաղաքում: Քանիցս շեշտելով հանդերձ՝ Խորենացին այդ քաղաքի անունը չի հիշատակում, սակայն պարզից էլ պարզ է, որ խոսքը վերաբերում է Երվանդական քաղաքին. քաղաք, ուր տեղի է ունենում պատերազմը:*

Ուրեմն, կարող ենք վստահաբար արձանագրել, որ Երվանդի հիմնադրած երրորդ քաղաքը, ուր Արմավիրից փոխադրել են բոլոր կուռքերը, Երվանդավանն է:

բ. Որտե՞ղ է գտնվում Երվանդական քաղաքը.

“Երվանդի բանակն ավելի քան երեք հարյուր ասպարեզ դեպի հյուսիս հեռու էր իր քաղաքից և գտնվում էր Ախուրյան գետի վրա”,– գրում է պատմիչը: Խորենացին՝ “իր քաղաքը” *ասելով, տվյալ դեպքում նկատի ունի Երվանդաշատ մայրաքաղաքը: Երեք հարյուր ասպարեզը կազմում է 69 կմ*[22]*: Երվանդական քաղաքի տեղը հստակ որոշադրելու համար պակասում է միայն մեկ, բայց շատ կարևոր տվյալ. Ախուրյան գետի ո՞ր ափին է գտնվում քաղաքը: Սա կարելի է հեշտությամբ պարզել, եթե հետևենք Խորենացու նշած՝ Սմբատի զորքի եկած ճանապարհին. “Սմբատը մանուկ Արտաշեսի հետ բարձրանում է Գեղամա ծովի ափը՝ Արագած կոչված լեռան թիկունքով. նրանք շտապում էին հասնել Երվանդի բանակին”, և առանց Ախուրյան գետն անցնելու տեղի է ունենում ճակատամարտը: Ակներև է, որ Երվանդավանը գտնվում է Ախուրյանի ձախ ափին:*

Խորենացու տեղեկությունը, փաստացի, հետևյալն է. Երվանդավանն ավելի քան 69 կմ դեպի հյուսիս հեռու էր Երվանդաշատից և գտնվում էր Ախուրյան գետի ձախ ափին:

Արդ, եթե հետևենք Խորենացու տեղեկությանը և այսօր Երվանդաշատ մայրաքաղաքից՝ Ախուրյան գետի ձախ ափով, Բագարան, Քարակերտ, Արտենի, Արագած, Գետափ, Թլիկ բնակավայրերով, այցելենք Երվանդական, ապա 67,7 կմ կտրել- անցնելուց հետո[23] *կամա թե ակամա կհայտնվենք Անիպեմզա քաղաքատիպ ավանում՝ Հ. Շահխաթունյանցի 1842-ին հայտնաբերած Երերվաց դաստակում, ամենապայծառ, հոյակապ եկեղեցու կամ Թ. Թորամանյանի՝ դեռևս 1911-ին մատնացույց արած Երերույքի հեթանոսական տաճարի մոտ. “Այս եկեղեցվոյ*

---

[22] *Նույն տեղում, էջ 329, ծանոթ. 31:*

[23] *Տե՛ս* Google map.

հեթանոսական ծագման մասին տեսությունս կարդալ իմ “Տեկորի տաճարը” աշխատության մեջ”[24]:

Եզրահանգում. Հայաստանի Հանրապետության Անիի շրջանի Ախուրյան գետի ձախ ափին գտնվող Երերույքի բազիլիկ տաճարը մ. թ. ա. 220 – 201 թվականներին հիմնադրել է Երվանդ Դ թագավորը:

ВОПРОС ДАТИРОВКИ ЕРЕРУЙКСКОЙ БАЗИЛИКИ ИЛИ ГДЕ НАХОДИЛИСЬ ГОРОДА БАГАРАН И ЕРВАНДАВАН

ВААГН ГРИГОРЯН

Резюме

Ереруйкская базилика с 1907 года до наших дней считается памятником христианского периода и датируется V–VI вв. Основоположник истории армянской архитектуры Торос Тораманян еще в 1911 году высказал точку зрения, что Ереруйкская базилика заложена как языческий храм. Однозначно принимая и следуя гениальному предвидению Т. Тораманяна, можно утверждать, что одно из блестящих творений армянского гения – Ереруйкскую базилику – основал царь Ерванд IV в 220–201 гг. до н. э.

THE PROBLEM OF DATING THE BASILICA OF YERERUYK OR WHERE THE CITIES OF BAGARAN AND YERVANDAVAN WERE LOCATED

VAHAGN GRIGORYAN

Summary

Since 1907 to the present time, the basilica of Yereruyk has been considered a Christian monument and is dated by the 5th–6th cc. As far back as in 1911, the founder of the history of Armenian architecture Toros Toramanyan expressed the viewpoint that the basilica of Yereruyk was foun-ded as a pagan temple. Unequivocally admitting and pursuing T. Toramanyan’s genial prediction, it may be stated that the basilica of Yereruyk, a brilliant embodiment of the Armenian genius, was founded in 220 - 201 BC by King Yervand IV.

[24] *Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության, էջ 241:*